ՄՐՑՈՒՅԹ ADA/AIR#18-10-24

Տեխնիկական Առաջադրանք

«ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման» համակարգի օրենքի և կառավարության որոշման մշակում, ներկայացում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը

Ագրոբիզնեսի և Գյուղի Զարգացման Կենտրոն հիմնադրամը «ՀՀ-ում կենդանիների համարակալաման և հաշվառման համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, նախատեսում է ներգրավել իրավաբանական գրասենյակ, որը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող «ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» համապետական ծրագրի շրջանակներում կիրականացնի օրենսդրական դաշտի վերլուծություն, բացերի գնահատում և կներկայացնի ոլորտը կարգավորելու վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների առաջարկ՝ սերտ համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ:

Ծրագրի հակիրճ բնութագիր

2022-2023 թվականների ընթացքում պետական պատվերի հաշվին կհամարակալվի և կհաշվառվի հանրապետությունում առկա **շուրջ 1.0** մլն գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, այդ թվում՝ մեկնարկային տարում 800 հազար գլուխ, այնուհետև՝ շուրջ 245 հազար գլուխ տարեկան, ինչը պատշաճ հիմքեր կստեղծի ոլորտը կարգավորող օրենսդրության ընդունման և հետագա կիրարկումն ապահովելու համար և կնպաստի ԽԵԿ համարակալման և հաշվառման ինստիտուտի կայացմանը, նախիրներում ըստ սեռահասակային կազմի ԽԵԿ-ի գլխաքանակի վերաբերյալ ստույգ տեղեկատվական բազայի առկայությանը, հանրապետության ողջ տարածքով ԽԵԿ-ի տեղաշարժի վերահսկմանը և հետագծելիության բարելավմանը, կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովմանը, սննդամթերքի անվտանգության և հանրային առողջության մակարդակի բարձացմանը, տոհմասելեկցիոն լայնածավալ աշխատանքների կազմակերպման համար նախադրյալների ստեղծմանը, կենդանական ծագման արտադրանքի արտադրության ծավալների կանխատեսումների ճշգրտության բարձրացմանը և գյուղատնտեսական այլ կենդանիների համար վարչական ռեգիստրի նախադեպի ու հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության ինստիտուտի կայացման նախադրյալների ստեղծմանը:

Ծրագրի նպատակն ու առաքելությունը

Ծրագրի նպատակն է պետական պատվերի շրջանակում ներդնել և գործարկել խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման համակարգ, ինչը հնարավորություն կտա.

- ԽԵԿ-ի գլխաքանակի վերահսկում
- Տեղաբաշխվածության և շարժի վերահսկում
- Սեռահասակային կազմի մասին տեղեկատվության հավաքագրում
- Ցեղայնության մասին տեղեկատվության հավաքագրում
- Անասնաբուժական պարտադիր միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:

Ծրագրի առաքելությունն է զգալիորեն բարելավել կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների վերահսկման և տարածման կանխարգելման, ինչպես նաև կենդանական ծագման սննդամթերքի անվտանգության մակարդակը:

Խնդիրը

«ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման» համակարգի օրենքի և կառավարության որոշման մշակում, ներկայացում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը

Թիմ

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության ոլորտի համապատասխան ստորաբաժանումներ
- «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման բաժին
- ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
- «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամ

Նվազագույն որակավորման պահանջներ

Դիմումատուն պետք է հանդիսանա իրավաբանական գրասենյակ ու գրանցված լինի որպես իրավաբանական անձ): Դիմումատուն պետք է նաև համապատասխանի հետևյալ նվազագույն որակավորման պահանջներին.

- Առնվազն 10 տարվա իրավաբանական ծառայությունների մատուցման փորձ.
- ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենքների հետ հարմոնիզացնելու փորձ.
- Օրենքներ գրելու փորձ՝ նշելով հեղինակած և ընդունված օրենքները.
- Պետական մարմինների հետ աշխատանքային փորձ.
- Գյուղատնտեսության բնագավառի գիտելիքներ ու աշխատանքային փորձ.
- Թիմի անդամները պետք է գերազանց տիրապետեն անգլերեն լեզվին:

Հետաքրքրված կազմակերպությունները պետք է մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ը nazeli.grigoryan@card.am էլեկտրոնային հասցեին ուղարկեն.

1. Տեխնիկան առաջարկ, որը պետք է պարունակի դիմնումատուի ու թիմում ներգրավվող աշխատակիցների նվազագույն որակավորման պահանջներին համապատասխանության մասին տեղեկատվություն ու ապացույցներ՝ կցելով նաև թիմի անդամների ինքնակենսագրականները (CV).
2. Մեթոդաբանական առաջարկ, որը պետք է ներկայացնի այն մեթոդաբանությունը, որը դիմումատուն առաջարկում է կիրառել ծառայությունները մատուցելիս.
3. Ֆինանսական առաջարկ՝ արտահայտված ՀՀ դրամով:

Վերոնշյալ փաստաթղթերը կարող են ներկայացվել հայերեն կամ անգլերեն լեզուներով:

Մատուցվելիք ծառայությունների ժամկետը 6 ամիս է:

Հաղթողը կորոշվի տեխնիկական, մեթոդաբանական ու ֆինանսական առաջարկների համակցությամբ: